

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՄՈՏ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, ՔԱՂՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

-----

**քաղ. Երևան  
Մասնակցում էին՝**

- |                |   |
|----------------|---|
| Գ. Բեգլարյան   | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար  |
| Ե. Զախարյան    | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար  |
| Հ. Մանուկյան   | ՀՀ արդարադատության նախարար  |
| Կ. Ճճմարիտյան  | ՀՀ էկոնոմիկայի նախարար  |
| Կ. Արեյան      | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ  |
| Ա. Առաքելյան   | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ  |
| Վ. Նիկոյան     | Երևանի քաղաքապետի տեղակալ   |
| Ն. Երիցյան     | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ   |
| Ա. Մուսայան    | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ                                     |
| Ա. Սարգսյան    | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն |
| Ն. Մարտիրոսյան | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար              |

**Հրավիրվածներ՝**

- |                 |   |
|-----------------|---|
| Ա. Զանցուղազյան | ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ |
|-----------------|---|

Գ. Պողոսյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Ծ. Սողոմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Խաչատրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ

1. Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ (18.7 կմ) և Լանջիկ-Գյումրի (27.47 կմ) ճանապարհահատվածների կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերը հաստատելու մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

**Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանին՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ծշմարիտյանի առաջարկությամբ շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութի վերաբերյալ հայտարարությունը տեղադրել նաև Առևտրի համաշխարհային կազմակերպության համապատասխան կայքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն հանդիսանում է ԱՀԿ-ի անդամ և միացել է Գնումների համաձայնագրին.

2) հաստատել Տրանշ 3-ի Թալին-Լանջիկ (18.7 կմ) և Լանջիկ-Գյումրի (27.47 կմ) ճանապարհահատվածների կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերը:

3) Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանին՝ համապատասխանաբար ըստ ֆինանսավորվող ենթահատվածների ԱԶԲ-ի և ԵՆԲ-ի հաստատումները ստանալուց հետո, կազմակերպել համապատասխան հայտարարությունների հրապարակումը:

2. Տրանշ 3-ի շրջանակներում Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի 71+500 կմ-ից մինչև 117+670 կմ (Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի հատվածներ) աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հարցին ընթացք տալ ՀՀ վարչապետին համապատասխան հավելյալ հիմնավորումներ ներկայացնելուց և լրացուցիչ քննարկումից հետո:

3. Մ-2 Երևան-Արտաշատ և Մ-1 Երևան-Աշտարակ ճանապարհահատվածներում 9 ուղեանցերի և 1 կամրջի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերը հաստատելու մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

**Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հաստատել Մ-2 Երևան-Արտաշատ և Մ-1 Երևան-Աշտարակ ճանապարհահատվածներում 9 ուղեանցերի և 1 կամրջի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային փաստաթղթերը,

2) ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Կարեն Ճճմարիտյանի առաջարկությամբ ապահովել շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթների հրապարակումը նաև ԱԶԲ կայքում:

3) Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանին՝ ԱԶԲ հաստատումը ստանալուց հետո, կազմակերպել համապատասխան հայտարարության հրապարակումը:

4. Տրանշ 3-ի շրջանակներում 9 ուղեանցերի և 1 կամրջի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

**Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

- 1) Հաստատել Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհահատվածներում 9 ուղեանցերի և 1 կամրջի շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության շրջանակը:
  - 2) Հեղինակային հսկողության իրականացման հարցին ընթացք տալ ՀՀ վարչապետին համապատասխան հավելյալ հիմնավորումներ ներկայացնելուց և լրացուցիչ քննարկումից հետո:
  - 3) Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանին՝ ԱԶԲ հաստատումը ստանալուց հետո կազմակերպել համապատասխան տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացը:
5. Ճանապարհային ցանցի սպասարկման համակարգի և հանրային-մասնավոր համագործակցության զարգացման, ճանապարհային կառավարման համակարգի, Հայաստանում ճանապարհային ոլորտի ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքի հաստատման մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

**Օրակարգի 5-րդ հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝** Հաստատել «Ճանապարհային ցանցի սպասարկման համակարգի և հանրային-մասնավոր համագործակցության զարգացման, ճանապարհային կառավարման համակարգի, Հայաստանում ճանապարհային ոլորտի ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի ներդրման խորհրդատվական

ծառայությունների տեխնիկական առաջադրանքը», սակայն, հարցին անդրադառնալ լրացուցիչ քննարկումից հետո՝ նշված ծառայությունները դրամաշնորհային միջոցներով ձեռքբերելու հնարավորություններն ուսումնասիրելու արդյունքներով:

6. Պայմանագրերի/FIDIC-ի գծով պահանջների կառավարման փորձագետի խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

**Օրակարգի 6-րդ հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

- 1) Հաստատել «Պայմանագրերի/FIDIC-ի գծով պահանջների կառավարման փորձագետի» խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանքն ու նախահաշիվը:
- 2) Հանձնարարել «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ԾԻԿ» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանին՝ հաստատված տեխնիկական առաջադրանքը տրամադրել ԱԶԲ-ին՝ համապատասխան գնման գործընթաց կազմակերպելու համար:

7. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի գնումների պլանի փոփոխությունները հաստատելու մասին

-----  
(Արթուր Սարգսյան, Հովիկ Աբրահամյան)

**Օրակարգի 7-րդ հարցը զեկուցեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արթուր Սարգսյանը:**

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3-ի գնումների պլանի փոփոխությունները, բացառությամբ՝ սույն արձանագրության 5-րդ կետերով նախատեսված ծառայությունների ձեռքբերման հետ կապված փոփոխություններից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ



ՀՈՎԻԿ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ  
ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ»  
ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ